

# COVID-19-ի Վերաբերյալ Ընթացիկ Պահանջներ Աշխատակիցների Համար Լոս Անջելեսի Շրջանի Հանրային Առողջության Վարչություն

## ԿԱՆԽԵՔ COVID-19-Ի ՏԱՐԱՃՈՒՄԸ ԵՎ ՊԱՇՏՊԱՆՔ ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻՆ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԸ:

Գործատուները պետք է լինեն զգուս և շարունակեն պաշտպանել իրենց աշխատակիցներին և համայնքը՝ հետևելով վարակի վերահսկման միջոցառումներին և Հանրային Առողջության Վարչությանը հաղորդելով COVID-19-ով վարակման դեպքերի մասին:

5/18/22. Թարմացվել է Cal/OSHA-ի վերանայված ETS-ին համապատասխանելու համար. ուժի մեջ է 5/6/22-ից: Cal/OSHA-ի վերանայված չափանիշները գործատուներից պահանջում են ըստ պահանջի տրամադրել շնչառական դիմակներ ցանկացած աշխատակցի, որն աշխատում է փակ տարածքում կամ երթևեկում է այլ անձանց հետ՝ անկախ պատվաստման կարգավիճակից: Վերանայված չափանիշները նաև պահանջում են, որ գործատուները թեստավորում առաջարկեն ցանկացած աշխատակցի, որն ունի ախտանիշ:

Այս փաստաթուղթն ամփոփում է ընթացիկ պահանջները, որոնց գործատուները պետք է շարունակեն հետևել՝ համաձայն նահանգի և Շրջանի օրենքների: Խնդրում ենք այցելել ստորև հղված կայքէջերը՝ պահանջների մասին ավելի մանրամասն տեղեկությունների համար:

## ՊԱՀԱՆՋՆԵՐ

Լոս Անջելեսի Շրջանում աշխատող գործատուները պետք է հետևեն՝

- 1 Շրջանի Առողջության Պատասխանատուի Հրամանին (HOO)՝ [ph.lacounty.gov/media/Coronavirus/reopening-la.htm#orders](https://ph.lacounty.gov/media/Coronavirus/reopening-la.htm#orders):
- 2 Cal/OSHA-ի Արտակարգ Իրավիճակների Ժամանակավոր Չափանիշներին (ETS)՝ [dir.ca.gov/covid](https://dir.ca.gov/covid):

*Խնդրում ենք նկատի ունենալ, որ պահանջների տարբերվելու դեպքում գործում են ավելի խիստ (ավելի պաշտպանիչ) հրահանգները:*

## 1 ՇՐՋԱՆԻ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒԻ ՀՐԱՄԱՆԻ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

### Հաղորդել Աշխատավայրում COVID-19-ով Վարակման Դեպքերի Մասին

- Երբ որևէ բիզնեսի հայտնի է դառնում 14 օրվա ընթացքում իր աշխատակիցների (կամ տեղում անկախ պայմանագրային կամ ժամանակավոր աշխատողների) շրջանում COVID-19-ով վարակման երեք (3) կամ ավելի դեպքերի մասին, գործատուն (բիզնեսի սեփականատերը/կառավարիչը/կազմակերպիչը) պետք է այդ բռնկման մասին հաղորդի Հանրային Առողջության Վարչությանը (888) 397-3993 կամ (213) 240-7821 հեռախոսահամարներով կամ առցանց՝ <http://www.redcap.link/covidreport> հասցեով:

Երբ մեկ կամ ավելի աշխատակիցների, նշանակված կամ պայմանագրային աշխատողների կամ բիզնեսում աշխատող կամավորների թեստի արդյունքը դրական է կամ նրանք ունեն COVID-19-ին համապատասխան ախտանիշներ (վարակված անձ), գործատուն պետք է ունենա արձանագրություն՝ պահանջելու վարակված անձից մեկուսանալ և հայտնաբերելու և պատշաճ կերպով վերահսկելու աշխատավայրում վարակի հետ շփված բոլոր աշխատողներին: Տե՛ս [Արձագանք COVID-19-ին Աշխատավայրում](#):

**Դիմակներ**

- Դիմակ կրելը փակ հանրային վայրերում և բիզնեսների տարածքում գտնվելիս խստորեն խորհուրդ է տրվում բոլոր անձանց: Այդպիսի վայրերում բիզնեսները կարող են շարունակել պահանջել կրել դիմակ իրենց աշխատավայրի փակ տարածքներում:
- Անհրաժեշտ է շարունակել կրել դիմակ բարձր վտանգավորության որոշ վայրերի փակ տարածքներում, ներառյալ՝ հանրային փոխադրամիջոցները, փոխադրամիջոցների կայարանները, առողջապահական բոլոր հաստատությունները, ներառյալ՝ երկարատև խնամքի հաստատությունները և ծերանոցները, ուղղիչ հաստատությունները և կալանավայրերը, անօթևանների կացարանները և արտակարգ իրավիճակների ապաստարանները: Տե՛ս [Դիմակ կրելու Կանոնները և Հորդորները](#):
- Այն աշխատավայրերում, որտեղ դիմակ կրելը կամավոր է, գործատուները պետք է տրամադրեն դեմքը լավ գրկող բժշկական և շնչառական դիմակներ, ինչպիսիք են N95-ը, KN95-ը կամ KF94-ը՝ կամավոր օգտագործման համար, այն աշխատակիցներին<sup>1</sup>, որոնք աշխատում են փակ վայրերում կամ երթևեկում են մյուս աշխատակիցների և/կամ հաճախորդների հետ: Եթե գործատուն համընդհանուր պահանջում է փակ տարածքներում դիմակ կրել, պետք է տրամադրի բժշկական դիմակներ բոլոր աշխատակիցներին:

**Պատվաստումը սնունդ մատուցելու թույլտվություն ունեցող՝ վտանգավորության ցածր աստիճանով վայրերի համար**

- Խստորեն հորդորվում է, որ վտանգավորության ցածր աստիճանով պայմանավորված սնունդ մատուցելու թույլտվություն ունեցող գիշերային ակումբների, լաունջների, բարերի, գարեջրատների/ գործարանների, օղեգործարանների և գինետների/գործարանների աշխատակիցները լիովին պատվաստված լինեն COVID-19-ի դեմ և ստացած լինեն խթանիչ դեղաչափը:
- Խստորեն հորդորվում է, որ հաճախորդները, որոնք սպասարկվում են այդ բիզնեսների փակ տարածքներում, մուտք գործելուց առաջ նաև ներկայացնեն COVID-19-ի դեմ լիովին պատվաստման ապացույց:

**Պատվաստումը/Թեստավորումը Մեզա Միջոցառումների համար**

- Խստորեն հորդորվում է, որ Մեզա Միջոցառումների (բացօթյա միջոցառումներ ավելի քան 10 000 մասնակիցներով և փակ միջոցառումներ ավելի քան 1000 մասնակիցներով) Կազմակերպիչները շարունակեն պահանջել հաճախորդներից ներկայացնել COVID-19-ի դեմ լիովին պատվաստման ապացույց կամ միջոցառմանը նախորդող 2 օրվա ընթացքում կատարված վիրուսային թեստի բացասական արդյունք (ՊՇՌ/PCR) կամ նախորդող 1 օրվա ընթացքում կատարված (հակազենի) COVID-19-ի թեստի բացասական արդյունք:

**Օդափոխություն**

- Գործատուները պետք է գնահատեն ինչպես օդափոխության համակարգերի վիճակը՝ դրսի օդի ներհոսքը առավելագույնի հասցնելու և գտման արդյունավետությունը բարձրացնելու համար, այնպես էլ օդի մաքրման լրացուցիչ համակարգերի կիրառումը:

**2 CAL/OSHA-Ի COVID-19-Ի ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ**

Գործատուները պետք է ունենան [COVID-19-ի Կանխարգելման Գրավոր Ծրագիր](#), որը պետք է ներառի՝

- Աշխատակիցների վերապատրաստում և հրահանգներ COVID-19-ի վտանգների վերաբերյալ,
- Աշխատակիցների ախտանիշների ստուգման գործընթաց,
- Աշխատակիցների հասանելիություն COVID-19-ի թեստավորմանը,

<sup>1</sup> Որոշ անկախ պայմանագրային աշխատողներ համարվում են աշխատակիցներ՝ ըստ Նահանգի Աշխատանքային Օրենսգրքի: Լրացուցիչ մանրամասների համար ստուգեք Կալիֆորնիայի Արդյունաբերական Հարաբերությունների Վարչության [Անկախ պայմանագրային աշխատողների և աշխատակիցների](#) կայքէջը:

- Աշխատավայրում COVID-19-ով վարակման դեպքերին արձագանքելու ծրագիր,
- Աշխատակիցների դիմակ կրելու վերաբերյալ արձանագրություն,
- Աշխատավայրում COVID-19-ով վարակված անձանց չընդունելու ծրագիր, քանի դեռ չեն բավարարվել աշխատանքի վերադառնալու չափանիշների պահանջները:

### Դիմակներ

- Գործատուները պետք է աշխատակիցներին ըստ պահանջի տրամադրեն դիմակներ, որոնք ունեն առնվազն երկու շերտ: ԽՆԴՐՈՒՄ ԵՆՔ ՆԿԱՏԻ ՈՒՆԵՆԱԼ, որ Շրջանի Առողջության Պատասխանատուի Հրամանի համաձայն՝ բոլոր աշխատակիցներին պետք է տրամադրել համապատասխան բժշկական և շնչառական դիմակներ՝ կամավոր օգտագործման համար, եթե նրանք աշխատում են փակ տարածքում կամ փոխադրամիջոցներում մյուս աշխատակիցների կամ հաճախորդների հետ: Գործատուները պետք է հետևեն Շրջանի Հանրային Առողջության Պատասխանատուի հրամանին, եթե այն նախատեսում է ավելի լավ պաշտպանություն::
- Գործատուները պետք է աշխատակիցներին հորդորեն աշխատավայրում կրել դիմակ՝ անկախ պատվաստման կարգավիճակից, իսկ գործատուի կողմից վատ վերաբերմունքն անօրինական է: Գործատուները չպետք է խրախուսեն որևէ աշխատողի դիմակ չկրել:

### Անձնական Պաշտպանիչ Հանդերձանք

- N95 շնչառական սարքերի օգտագործումը կամավոր է, սակայն գործատուները պետք է պահանջ լինելու դեպքում դրանք տրամադրեն յուրաքանչյուր աշխատակցի, որն աշխատում է փակ տարածքում կամ երթևեկում է այլ անձանց հետ: N95 շնչառական սարքերը պետք է համապատասխանեն աշխատակցին, և աշխատակիցը պետք է ստանա **շնչառական սարքը պատշաճ կրելու և այն դեմքին կիպ հարմարեցնելու** վերաբերյալ հիմնական ցուցումներ: Աշխատակիցների համար N95 շնչառական դիմակ կրելու դասընթացների մանրամասները հասանելի են Cal/OSHA-ի ՀՏՀ-ների էջում:
- N95 շնչառական սարքերը պետք է փոխարինվեն վնասվելու, ձևափոխվելու, կեղտոտվելու դեպքում կամ երբ դրանցով դժվար է շնչել:

### Ձեռքերի Հիգիենա

- Խրախուսեք աշխատակիցներին լվանալ ձեռքերը և ժամանակ տրամադրեք դրա համար: Աշխատակիցներին տրամադրեք ձեռքերի ախտահանիչ միջոցներ, որոնք հաստատված են:

### Օդափոխություն

- Գործատուները պետք է գնահատեն օդափոխության համակարգերի վիճակը՝ դրսի օդը առավելագույնի հասցնելու և գտնան արդյունավետությունը բարձրացնելու համար, ինչպես նաև օդի մաքրման լրացուցիչ համակարգերի կիրառումը գնահատելու համար:

### COVID-19-ի Թեստավորման Արձանագրություն և Աշխատավայրում Բռնկման Մասին Հաղորդում

- Առաջարկեք անվճար թեստավորում աշխատանքային ժամերին բոլոր այն աշխատակիցներին, որոնք/որոնց
  - Աշխատավայրում շփվել են COVID-19-ով վարակված անձի հետ, բացառությամբ նրանց, որոնք ապաքինվել են COVID-19-ից վերջին 90 օրվա ընթացքում և չունեն ախտանիշներ:
  - Կարիք ունեն թեստավորման՝ աշխատելը շարունակելու կամ ավելի շուտ աշխատանքի վերադառնալու համար, եթե թեստավորվել են կարանտինի կամ մեկուսացման հրահանգներին հետևելու ընթացքում:
  - Ունեն ախտանիշներ՝ անկախ նրանից աշխատավայրում շփվել են վարակակրի հետ, թե ոչ:
- Թեստավորումը կարող է առաջարկվել գործատուի, առողջապահական ապահովագրության միջոցով կամ համայնքային թեստավորման վայրում:
- Տեղեկացրեք աշխատակիցներին, աշխատակիցների ներկայացուցիչներին և աշխատավայրում գտնվող մյուս բոլոր աշխատողներին COVID-19-ի վարակակրի հետ նրանց հնարավոր շփման մասին մեկ աշխատանքային օրվա ընթացքում:

**Աշխատողների Վճարվելու և Բացակայելու Իրավունքները**

- Պահպանեք աշխատակիցների աշխատավարձերը, վաստակած գումարները, ինչպես նաև նրանց իրավունքներն ու նպաստները և շարունակեք վճարել դրանք, եթե նրանցից պահանջվում է բացակայել աշխատավայրից, քանի որ նրանք կամ վարակված են COVID-19-ով, կամ աշխատավայրում շփվել են COVID-19-ի վարակակրի հետ:
- [Լրացուցիչ Վճարովի Արձակուրդի](#) ծրագրի միջոցով աշխատակիցներին տրամադրեք տեղեկատվություն հիվանդության հիմքով վճարովի արձակուրդի հասանելիության մասին:

**COVID-19-ի Բռնկման Մասին Հաղորդելու և Մեղմացման Պահանջները**

- Հաղորդեք աշխատավայրում COVID-19-ով վարակման դեպքերի և բռնկումների մասին տեղեկությունները տեղական առողջապահական բաժանմունքին և տրամադրեք COVID-19-ի բռնկման վերաբերյալ ցանկացած տեղեկատվություն, որը պահանջվում է տեղական առողջապահության բաժնի կողմից:
  - Երբ աշխատավայրում կան **աշխատակիցների՝ COVID-19-ով վարակման 3 կամ ավելի դեպքեր**, գնահատեք աշխատակիցների միջև, ինչպես նաև աշխատակիցների և հանրության միջև ֆիզիկական հեռավորությունն ապահովելու և արգելապատնեշներ տեղադրելու անհրաժեշտությունը:
  - Երբ կան **աշխատակիցների՝ COVID-19-ով վարակման 20 կամ ավելի դեպքեր**, որը համարվում է խոշոր բռնկում, գործատուները պետք է անմիջապես՝
    - Հասանելի դարձնեն թեստավորումը վարակակրի հետ շփված անձանց խմբի բոլոր աշխատակիցների համար՝ անկախ պատվաստման կարգավիճակից, շաբաթը երկու անգամ կամ ավելի հաճախ, եթե դա հորդորվում է տեղական առողջապահական բաժանմունքի կողմից: **Աշխատակիցներից, որոնք ապաքինվել են COVID-19-ից վերջին 90 օրվա ընթացքում և չունեն ախտանիշներ, չի պահանջվում թեստավորվել:**
    - Ապահովեն ֆիզիկական հեռավորություն բոլոր աշխատակիցների համար՝ անկախ պատվաստման կարգավիճակից:
    - Բոլոր աշխատակիցներին առաջարկեն կամավոր օգտագործման համար շնչառական սարքեր՝ անկախ պատվաստման կարգավիճակից և առանց սպասելու աշխատակցի պահանջին:

**i** **ՀԱՎԵԼՅԱԼ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ**

**Cal/OSHA:** COVID-19-ի, ջերմային հարվածի հետևանքով առաջացող հիվանդությունների կանխարգելման և աշխատավայրում անտառային հրդեհների ծխից պաշտպանվելու մասին տեղեկատվության կամ սովորական աշխատանքային ժամերին Cal/OSHA-ի երկլեզու ներկայացուցչի հետ խոսելու համար խնդրում ենք զանգահարել 833-579-0927 հեռախոսահամարով:

**Լոս Անջելեսի Շրջանի Հանրային Առողջության Վարչություն:** Հարցերի դեպքում խնդրում ենք դիմել մեր Արդյունաբերության Ներգրավման (Industry Engagement) Ծրագրին՝ (626) 430-5320 հեռախոսահամարով: